ՆԱՆԱ ԲԱԳՐԱՏՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Հրանտ Մաթևոսյանը շատ ուշադիր և բարյացակամ անձնավորություն էր իր շրջապատի տաղանդավոր անհատների հանդեպ, նրանց նկատելու և գնահատելու ընդգծված բնավորություն ուներ և առիթը եկած պահին կամ նույնիսկ առանց երևացող առիթի, չի զլացել արտահայտվել նրանց մասին: Հրապարակախոսության այս ճյուղը որպես կանոն դասակարգվում է *«գրախոսություն»* բնութագրականի տակ[1]: Ուսումնասիրելով Մաթևոսյանի ժառանգության այս հատվածը, նկատվում է, որ, այնուամենայնիվ, այն ժանրային ստույգ դասակարգման սխալ կլիներ ենթարկել: Մաթևոսյանը իրականության տաղանդավոր նկարիչ էր, և այս անդրադարձները իր շրջապատի գործիչներին այդ ընդհանուր բնանկարի մի հատվածն են կազմում: Անժխտելի է այս անդրադարձների ճանաչողական արժեքը:

Հրանտ Մաթևոսյանն իր հրապարակախոսությունը սկսեց, կարելի է ասել, հենց այս ժանրով: Նրա առաջին տասը հեղինակային հոդվածներից ութը նվիրված են մեր գործիչներին, գրողներին, արվեստագետներին: Եվ հետագայում երբեք չմոռացավ այն, դա պայմանավորված էր իր կերտվածքով:

Հայտնի է, որ Հրանտ Մաթևոսյանը բացառիկ համակրանք է դրսևորել սփյուռքահայ անկրկնելի մի գրողի *Հակոբ Մնձուրու* նկատմամբ: Մաթևոսյանին կարելի է համարել որոշ առումով նույնիսկ Մնձուրու հայտնագործողը մեզ համար. այնպիսի ջանասիրությամբ և հետևողականությամբ էր նա գտնում իրեն ժամանակակից, բայց մի շարք պատճառներով ժամանակի ընթերցողին դժվար մատչելի նրա ստեղծագործության մեկիկ-մեկիկ հավաքված պատառիկները և պատրաստում, հանձնում, պարտադրում տպագրության: Վահագն Դավթյանի նման տեղեկացված անձնավորությունը մի զրույցում հիշում է, որ Մաթևոսյանն էր առաջին անգամ ծանոթացրել Մնձուրու մի պատմվածքի հետ. «... այնուհետև նա մեզ համար, ինչպես ասում են, փնտրված հեղինակ դարձավ»[2]:

---

[1] Տես, օրինակ, Жанры советской газеты, М, 1972,

[2] Հեռացող աշխարհի առաքյալը: Գրական թերթ, 12 նոյեմբերի, 1976:

Հրանտ Մաթևոսյանը Մնձուրուն գյուղագիր չէր անվանում, այլ կենցաղագիր: Նա գտնում էր, որ ընդամենը միայն Մնձուրուն ուսումնասիրելով, ազգագրագետները կարող են չափազանց թանկարժեք վկայություններ ծեռք բերել այս կորած գյուղաշխարհի մասին՝ որոնք այլ աղբյուրներից հնարավոր չէ այլևս հայթայթել: Նրան անվանում է «Անհետացող աշխարհի առաքյալ ապագայի համար»[3]:

Մաթևոսյանն առիթը բաց չի թողնում նկարագրելու Մնձուրու աշխարհը, նկարագրում է նրա ու իր բառերը իրար խառնած, նրա պատկերները որպես իրենը: Հպարտանում է Մնձուրու հետ նրա (իր) ժողովրդով մի յուրահատուկ հպարտությամբ, կարոտալի ու ափսոսող հպարտությամբ փորձիր հպարտանալ չեղածով, եղած-գնացածով, անվերադառնալիով՝ սա Մաթևոսյանի ու Մնձուրու հպարտությունը կլինի: Զարմանալի է «արևելահայ» Մաթևոսյանը ինչպես է դետալ առ դետալ հասկանում մինչև ուղնուծուծը արևմտահայ Մնձուրուն այդպիսի կենցաղային մանրամասնությամբ: Թեպետ ակնհայտ է գյուղական թեմայի ծգողականությունը, սակայն այս երկու բնաշխարհիկ գրողներին այդքան հարազատորեն կապող գերագույն ուժը հումանիզմն է, ընդհանուր սերը ամենայն մարդկայինի նկատմամբ: Եվ մաքուր մարդու հետ՝ մաքուր բնության աստվածացումը: Գրականագետները հետո պիտի ուսումնասիրեին Մաթևոսյանի պանթեիզմը, իսկ Մաթևոսյանն ի սկզբանե վերլուծում էր պանթեիզմի դրսևորումները Մնձուրու մոտ, նրա «կարոտալից բնապաշտությունը», «մի մեծ բնապաշտություն, որ ժամանակի հետ ավելի կխորանա ու իրական ծանրակշիռ արժեք կտա գրողի «դաշտանկարներուն»:

Եվ մի հանգամանք ևս: Մաթևոսյանին ոմանք հակում ունեն «մեղադրելու» եղեռնի թեմայից խուսափելու համար, դրանով հակադրելով, ասենք, Մուշեղ Գալշոյանին: Որ սա ծայրահեղ մակերեսային և անարդար մոտեցում է, առանձին առիթներով ապացուցել են մեր գրականագետները: Ոչ միայն իրական հումանիստ Մաթևոսյանը չէր կարող շրջանցել մարդկության նկատմամբ այդ մեծագույն հանցագործությունը, այլև փաստերը ցույց են տալիս, որ իր ստեղծագործության ամենասկզբից իսկ նրա հոգում որպես խոր վերք նստած է այդ գաղափարը: Մնձուրին ինքը եղեռնի ամենաանմիջական ժառանգորդը լինելով հանդերձ, իր գրական կերտվածքի օրինաչափություններից ելնելով, եղեռնի ուղղակի տեսարաններին չի նվիրվում (դա լավագույն օրինակն է հասկանալու Մաթևոսյանի այն պնդումները, թե թեմաներ կան, որ ենթակա չեն գեղարվեստական արտացոլման, կամ գոնե՝ բոլոր հեղինակները չեն, որ կարող են դրանց անդրադառնալ գեղարվեստական ստեղծագործության մեջ): Սակայն

[3] Акоп Мнджури, Литературная Армения, # 6, 1984, стр. 38.

նույնիսկ Մնձուրու մեղմ արվեստի մեջ Մաթևոսյանը խորությամբ տեսնում է մարդկության դեմ այդ մեծագույն մեղանչումի թողած հետքը, և դեռևս 60-ականներին, Մնձուրու առիթով դիպուկ շեշտադրությամբ և ատելությամբ նկարագրել է այդ չարիքի դեմքը. «Սելավի պես ողողեց ու քանդեց հարավային արևով ու Վարուժանի բնությամբ լուսավոր *մեր* երկիրը, և Մնձուրու հոգով մեկ նվալ սկսեց կորած կապույտ աշխարհի կարոտը ... դեռ միայն աղքատ ու կարծես դրական, դեռ միայն պարարտ ոճրահող ... այդ ալարկոտ, փնթի, չմտածող ու ջարդող խուժանի բորոտ զանգվածը»[4]: Բայց այս զայրույթը երկու գրողների գեղարվեստական գործերում այսպես մերկապարանոց չէր ներկայանում: Եղեռնի արյունից վախենում էր Մաթևոսյանը: Այդպես էր և Մնձուրին դե փորձիր մեղադրել: Եվ դա միայն եղեռնին չի վերաբերում: «Մնձուրին կարող էր «ողբերգություն», «դրամա» դնել իր պատմվածքների մեջ, բայց նա այդ չի արել, չի արել, մեր կարծիքով, նյութի նկատմամբ խոր հարգանքի պատճառով կամ շնորհիվ»: «... Նուրբ գեղագետի նրա խիղճը արգելում է պայթուցիկ ողբերգություն դնել այնտեղ, ուր այդ ողբերգությունը, որպես օտար մարմին, չէր հանդուրժվի»: «Դրամա, ողբերգություն ներքին փլուզումներ, իհարկե, կան Մնձուրու բոլոր պատմվածքներում, ինչպես որ դրանք անպայման կան կյանքում, բայց այդ զարմանանալի արձակագիրը դեռ է նետել, մերժել է դրամա-ողբերգություն դասական և դասականացնող *գրականական* ծիրանին»[5]: Շատ նման է իրեն Մաթևոսյանին: Դրա համար էլ այդքան հարազատ էր:

Մնձուրուն Մաթևոսյանը երբեք որպես գրախոս չմոտեցավ, և ոչ էլ որպես գրական քննադատ: Գրչեղբայր հայկական բառը այստեղ է որ իր ամբողջ խորությունն է ստանում, և այն էլ չի բավականացնում, քանի որ դա ընդհանուր, մարդկային, համամարդկային եղբայրություն է, որ կարող են ունենալ հատկապես արվեստագետները: Մաթևոսյանը մեկ առ մեկ հաշվել է Մնձուրու բոլոր 200-ի չափ պատմվածքները: Եվ հիշում է բոլորի դետալները: Մաթևոսյանն ասում է, որ որոշ պատմվածքներ, Մնձուրին եթե գրած չլիներ ինքն էր գրելու:[6]

Հրանտ Մաթևոսյանի ամենաարժանավոր ժամանակակիցներից էր *Մուշեղ Գալշոյանը*: Այս երկու գրողները կոչված էին ներկայացնելու հայ ժամանակակից արձակի երկու հզոր ճյուղ: Մաթևոսյանը պետք է շարունակեր բակունցյան ավանդույթները, Գալշոյանը եկել էր լրացնելու Դաշտենցին: Մինչև այսօր էլ մենք Մուշեղի գեղարվեստական համակարգը հակադրում ենք Մաթևոսյանին: Նրանք իսկապես հակադիր գրողներ էին իրենց ստաղծագործության բազմաթիվ հատկանիշներով, չափազանց տարբեր, բայց ազգի բազմազանությունը

---

[4] Հրանտ Մաթևոսյան. Մաքուր, լուսավոր մի անկյուն: Գրական թերթ, 22 հունվ. 1967թ.:
[5] Հրանտ Մաթևոսյան. Հակոբ Մնձուրու աշխարհը: Գարուն, # 7, 1971, էջ 55:
[6] Գրական թերթ, 12 նոյ. 1976:

նրանք էին միավորում և ամբողջացնում: Եվ չնայած այդ մեծ տարբերությանը սկսած ծննդավայրից ու ծագումնաբանությունից, վերջացրած իրենց ներկայացրած միջավայրի պատմական ճակատագրով, այնուամենայնիվ, ինչպես իսկական հայ Մաթևոսյանը վստահորեն արձանագրում է «Ես մի քիչ նա եմ և նա մի քիչ ես»: Թեպետ Մաթևոսյանը այն վրեժի անմիջական հետևորդը չէր, ինչպես Գալշոյանը, Բայց Մաթևոսյանին Մուշեղի մեջ հատկապես դա էր դուր գալիս, որովհետև ինքն էլ ուժեղ մարդկային բնավորությունների երկրպագուն և իր ստեղծագործությամբ մարմնավորողն էր: Դրանով նրանք հարազատանում էին: Գալշոյանի վաղաժամ կորուստը Մաթևոսյանը Սևակից ու Մինասից հետո ճակատագրի երրորդ հարվածն է համարում, ու զարմանալի խորատեսությամբ ինչ-որ անբացատրելի համապատասխանություն է գտնում՝ երեքն էլ զոհվեցին 47-ամյա հասակում: Նա այն դանդաղ ժամանակների համար դա չափազանց քիչ է համարում. «Այդ տարիքին նոր միայն գրիչ բռնել են սովորում»: Մաթևոսյանը սա ընդգծում է շեշտելու համար, թե այս տաղանդավոր անհատները, ի հակադրություն սովորության, ինչքան բան են հասցրել անել ու միաժամանակ ուզում է ընդգծել դեռ ինչքան բան կանեին: «Մեզանից նրա կարոտով խլվեց շիտակության, սիրո, գաղտնիքի, վրեժի, պատմության, ցասման, հուսահատության ու հույսի անտրոհելի կոփվածքը», - գրում է Մաթևոսյանը[9]:

Հրանտ Մաթևոսյանի կյանքում մեծ տեղ ուներ *Սարոյանը*: Իհարկե, ամերիկյան գրականության մեջ նրան ավելի Ֆոլկներն էր ծգում, և նրա հետ են համեմատում, սակայն սարոյանական միամիտ մաքրությունն ու հոգեբանական յուրահատուկ խորությունը անսահման հարազատ էին Մաթևոսյանին: Հայաստանում լինելով, Սարոյանն այնպես էր շրջապատվում հատուկ անձանցով, որ մեծագույն դժվարություն էր նրան մոտենալ: Սակայն հայ գրականության մեջ նա ծնականություններից իսպառ զերծ մարդը, առաջին հերթին Մաթևոսյանին էր նկատել և հայ գրականությունից խոսելիս անընդհատ նրան էր մատնացույց անում: Մաթևոսյանը երկու օր լինելով Սարոյանի հետ, նույնպես այն բնորոշ բաներն էր միայն հիշում, որ ուրիշները չէին էլ նկատի: Օրինակ, միասին ճանապարհորդելիս ինչն էր տպավորվել . «Բոլոր մեծերի մեջ լինելով, վերջապես ընտրեց ամենամեծին փոքրիկ Անուշին, որ հիացած, կլոր աչքերով իրեն էր նայում»: Այդտեղ Սարոյանը ինչ-որ նկատել էր ու հուզվել նա անպաշտպան է, ինչպե՞ս է նա ապրելու... [10]: Սարոյանի կյանքից նրա մեջբերումները բոլորը շատ դիպուկ են ու բնութագրական, Մաթևոսյանը գրողի, հոգեբանի իսկական հայացք ունի: Ինչպես իրեն հատուկ է, Մաթևոսյանը

---

[9] Տես «Ավանգարդ», 17 հոկտ. 1980 թ.:

[10] Հրանտ Մաթևոսյան. Մարդասիրության մեծ առաքյալը. Երեկոյան Երևան, 21 մայիսի 1981:

Սարոյանին ևս տեսնում էր ոչ այն սովորական պրիզմայում, ինչ ընդունված է, նա անպայման առանձնահատուկը, խորհրդապաշտականը պիտի նկատեր: Դե արի ու որոշիր՝ ինչու է Շվեյցերի, Նանսենի, Գանդիի, Թումանյանի կրտսեր եղբայրը համարում Սարոյանին: Ինչու՞ է համեմատության համար ընտրել հենց նրանց՝ ամենատարբեր ոլորտի մարդկանց: Իհարկե՝ երբ միտքը կա, թեկուզև որոշակի կողմնորված, կարելի է և գուշակել՝ սրանք բոլորը հումանիզմի բարձրագույն արժեքների կրողներ են, և դա է նրանց միավորում, նաև՝ Սարոյանի հետ: Մաքենոսյանը Սարոյանին ամբողջ խորությամբ էր տեսնում: Երբ ուրիշները նրա հռչակի հետևից էին գնում, Մաքենոսյանը, շատ գծերով նրան հարազատ լինելով, ընկալում էր Սարոյանի իրական մեծությունը. «Ինքը իր հռչակից մեծ է, և հռչակված ուրիշներից էլ մեծ է»:

Հրանտ Մաքենոսյանի զգայուն գրիչը չափազանց արդյունավետ էր հայ գործիչների կերպարներին անդրադառնալիս: Նա հիսունի չափ հոդվածներ է տպագրել հայ և միջազգային գրական, հասարակական, մշակույթի, պետական գործիչների մասին, որոնք գրեթե բոլորն աչքի են ընկնում մոտեցման ինքնուրույնությամբ և նոր գծեր են բացահայտում այդ ճանաչված անձնավորությունների կենսագրության և խառնվածքի մեջ: Այստեղ մենք հանդիպում ենք Հակոբ Մնձուրու, Ստեփան Զորյանին, Գուրգեն Մահարուն, Մուշեղ Գալշոյանին, Անդրանիկ Ծառուկյանին, Վահան Տերյանին, Հովհաննես Թումանյանին, Եղիշե Չարենցին, Հրաչյա Քոչարին, Սիլվա Կապուտիկյանին, Անահիտ Սահինյանին, Վարդգես Պետրոսյանին, Համո Սահյանին, Վահագն Դավթյանին, Վանո Սիրադեղյանին, Վազգեն Սարգսյանին, Վիլյամ Սարոյանին, զորավար Անդրանիկին, Վասիլի Բելովին, Սուրեն Աղաբաբյանին, Հրանտ Թամրազյանին, Մինաս Ավետիսյանին, Վարուժան Վարդանյանին, Մհեր Մկրտչյանին, Լյուդմիլա Մոտալովային, ամերիկահայ հեռուստաբեմադրիչ Սուրեն Բուրսալյանին, այլոց: Սա մի առանձին աշխարհ է՝ բաղադրված մտավորականության ընտրանու՝ ընդգրկուն արժանիքների և մաքենոսյանական գույների յուրահատուկ խտացմամբ, որն իր ամբողջության մեջ մի առանձին ուսումնասիրության նյութ կարող է դառնալ:

Կյանքի վերջին շրջանում Մաքենոսյանը հետաքրքիր անցում կատարեց հայ գրականության մեջ իր ընտրյալների շարքում: Սովորաբար ով գալիս է ամենամեծերից է սկսում: Մաքենոսյանն այդպիսին չէր, սկզբում նա մանրամասնորեն, մասնագիտաբար մոտենում էր այն հեղինակներին, որոնք այս կամ այն գծով հարազատ էին իրեն, ձայնակից, և նույնիսկ կարող էր նրանց գերազանցել իր տաղանդով, բայց ինքը հավասարապես խառնվում էր նրանց տարերքին և համտեղ մարմնավորվում: Վերջին շրջանում, երբ արդեն անվերապահ ճանաչված և խորապես ինքնահաստատված վաստակաշատ գրող էր, նա սկսեց իր

հոգեբանական խորության մեջ ընդգրկել առաջնահերթորեն մեր մեծագույն գրողներին` *Թումանյանին և Չարենցին*: Ինչնունականների կեսերից նա ամբողջ շրջապատը, ամենայն ուսանելին, օրինակելին, աշխարհիս լուծումները սկսել էր բացատրել նրանցով, օրինակ բերել նրանց: 99-ին նա արդեն գրում էր. «Իմ ընթերցողը նրանք են, ովքեր նրանց վերընթացի ճանապարհին պաշտել են, մեծարել ու մեծացրել Տերյանին, Թումանյանին, Չարենցին»[14]: Մաթևոսյանը այդ շրջանում մի տեսակ ամփոփել էր իր գեղարվեստական գրականությունը, արձանագրելով իր մասնավոր թեմատիկայի բարձրացումը ըստ ամենայնի համամարդկային մակարդակի, և այստեղ է միայն, որ չափազանց հավասարակշիռ գրողը իրեն թույլ տվեց մտնել թումանյանական և չարենցյան հզոր աշխարհը: Եվ սա միայն անձնականով չպետք է բացատրել: 90-ականների կեսերից մեր ժողովրդի և նրա մտավորականության առջև արդեն ձևավորվել, ավարտուն ձևակերպվել էր նաև այն պատասխանատու և խոր իրադրության զգացողությունը, որ վաղ թե ուշ պետք է զգալ տար խորհրդային «անհոգ» ժամանակներից և անկախության խանդավառությունից հետո: Արդեն եկել էր ժամանակը գիտակցելու ազգին այսպես ասած պահելու, նրա հավերժական ուղին ապահովելու մեծ պատասխանատվությունը, որի հոգեբանական (ցանկալի կլիներ նաև ինտելեկտուալ) մեծագույն պատասխանատվությունն ընկնում էր ազգի առաջատար մտավորականության վրա: Այս իմաստով իրենց ժամանակ անկրկնելի էին Թումանյանն ու Չարենցը: Վաղ անդրադարձներում եթե Թումանյանը Մաթևոսյանի համար գեղարվեստական բացարձակ մեծություն է, բանաստեղծական տաղանդի ու փիլիսոփայական խորության լավագույն օրինակ, ապա անկախության նախօրեին և դրանից հետո գրված հոդվածներում նրա մեջ, ի լրումն ամենի, տեսնում է լուսավորչին, հասարակական ու ազգային գործչին: Այս շրջանում Մաթևոսյանը Չարենցի մեջ սրությունն ու իրեն պարտադրելու կարողությունն է ընդգծում: Նույնիսկ կուսակցականությունը (լայն առումով): «Մենք պարտավոր ենք Չարենցորեն խստակեց, հստակ և խիզախ լինել ողջ իրականությունն այնպես ընդգրկելու, որ կուսակցական սրություն ունենա, և մեզ օրթոդոքսորեն կարողանանք պարտադրել այսօրվա իրականությունը»[15]: Թվում է մաթևոսյանական չէ «օրթոդոքսորեն», «կուսակցականորեն» և այլն: Այնինչ դա Չարենցին հասկանալուց է, նա ոչ թե այս անդրադարձում իր բնավորությունն է դնում, այլ խոսում է Չարենցի բնավորությամբ, փնտրելով, թե դրանից ինչ ունենք այսօր հրատապ

---

[14] Հրանտ Մաթևոսյան: Գրողը, ժամանակը, ընթերցողը: Առավոտ, 13 հոկտ. 1999:

[15] Հրանտ Մաթևոսյան, Մեր ուսուցիչը Չարենցն է լինելու: «Գարուն», # 3, 1997, էջ 4

օրինակ վերցնելու, և ինչը կարող է իրական գործոն լինել այսօրվա համար: Սկզհայտ է, և դրանով ուշագրավ, որ չարենցյան պրոբլեմները Մաթևոսյանը տարածում է և *մեր ժամանակների* վրա.

Եվ քանի որ հասանք օրվա հրամայականներին, չենք կարող չանդրադառնալ Մաթևոսյանի կողմից մի ուշագրավ անդրադարձի, որը շատ հատկանշական է գրողի մտածողության ուշ շրջանի ուղղվածության համար: Դա դարասկզբի հայ պետական գործիչ *Արամայիս Երզնկյանի* կերպարին անդրադառնալու փաստն է: Այս գործչի մեջ Մաթևոսյանը տեսնում է բոլոր տեսակի իրավիճակներում հանուն ժողովրդի գործելու, դրսևորվելու հնարավորություն գտնելու անչափ գնահատելի տաղանդը, հակասությունները թե դրսում և թե ներսում առանց պատճառաբանությունների ինչպիսին էլ դրանք լինեն, կարգավորել կարողանալու նախանձելի ունակությունը, բոլոր քաղաքական ուժերի հետ հանուն ժողովրդի առանց հիշաչարության համագործակցելու պատրաստակամությունը, ինչը նա պետական գործչի համար չափազանց կարևոր հատկանիշ է համարում, որ այսօր չի տեսնում. «Նա կարողանում էր խաչված սրերն իջեցնել, անկապելիները կապակցել, հակառակ բևեռները մերձեցնել: Նրա այդ հատկությունը ավելի քան պետք էր իր ժամանակի Հայոց պատմության ամենաարտակարգ պահերին: Նա կուսակցության Լոնդոնի համագումար տարավ երեկվա թշնամական ուժերի միաբանությունը...»[16]. Բացառիկ քաղաքական կազմակերպվածություն և նպատակաուղղվածություն է դրսևորում Հրանտ Մաթևոսյանն այս շրջանում իր հարցադրումների մեջ: Երբ բոլորը շարք կանգնած զինվորերի նման երդվում էին ֆիդայական շարժմամբ ու ազատագրական պատերազմով, Մաթևոսյանը (Երզնկյանի անունից) մտածում էր. «Ցանկանում ենք լինել դարձյալ հզոր, անկախ, մեծ Հայաստան ծովից-ծով: Գուցե՞ թե, իր՞: Ինչպե՞ս, ինչո՞վ, ու՞մ միջոցով, ո՞վ է մեզ օգնելու. ո՞վ է ցանկանում մեր հզորությունը, ինչու՞ է ցանկանում, ինչու՞ էր ցանկանալու»: Այսօր սրանք դարձյալ ամենաակտուալ հարցադրումներն են մնում: Եվ դրանք այնքան հմտությամբ են առաջադրված, որ իրենց մեջ սպառիչ պատասխաններ են պարունակում. «Կազմեց «Ծիածան» խումբը, վճռական «ոչ» ասաց այդ ռոմանտիզմին ու ռոմանտիկներին, ովքեր նորօրյա երկաթե հզորությունների դեմ ոգեկոչել էին ուզում մեր հնօրյա այրուձի հզորությունը»: Ինչպես մեր ամենախորագետ պատմավիպասանները, Մաթևոսյանը Արամայիս Երզնկյանի կերպարը ընտրել է դիտավորյալ, նրա ռոմանտիկ ազգայնականների հետ վեճի վերլուծությամբ արձագանքելով այսօրվա դրույթներին:

---

[16] Այս և հաջորդ մեջբերումները տես Հրանտ Մաթևոսյան, Դեմք, որ դարձել էր լեգենդ: Հայաստանի Հանրապետություն, 23 փետրվարի, 1999թ.

Սկնհայտ է, որ դեռ այն ժամանակ Մաթևոսյան-անհատի այս մտորումները այսօր բացարձակ արդիական են դարձել, և հավանաբար Մաթևոսյանը իր ոչ գրական քաղաքական գործունեությունը, որ կյանքում այնքան էլ չէր ստացվել ժամանկների անկառավարելիության պատճառով, վերապահում էր այս ճակատագրական ուղղությանը: «Տեսությունը տեսություն, բայց կյանքը հետո շատերի առջև էր պատի նման կանգնելու, և դա շատ ավելի իրենց լայնախոհության պակասի, այսպես ասած սկզբունքային նեղմտության պատճառով»: Պարզ է, որ այսօրը նկատի ունի:

Արամայիս Երզնկյանի կերպարին ևս նա անդրադառնում էր ոչ թե առաջին հայացքից թվացող նրա հաղպատցի լինելու առիթով (դարձյալ շատ հնացած «գյուղական հարազատության» մոտիվն է գործում), այլ կարգավորման հրատապ անհրաժեշտություն զգացող ժամանակի թելադրանքով: Արդյո՞ք պետական այդ կարգի գործիչների մասին իր անավարտ, շատերի կողմից չհասկացված ու չարձագանքված իդեալները նաև նկատի չունի Մաթևոսյանը ընդգծելով. «Անդրկովկասյան սեյմի և կառավարության անդամ (աշխատանքի մինիստր), հայոց ազգային խորհրդի անդամ Արամայիս Երզնկյանը չհրավիրվեց Հայաստանի առաջին հանրապետության հիմնականում դաշնակցական կառավարություն, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի ղեկավար մարմին հեղկոմ»: Սակայն Մաթևոսյանը լի է փիլիսոփայական լավատեսությամբ, հիշատակելով Երզնկյանի հետագա գործունեությունը համեստ, ոչ ճակատային, բայց ազգային շինարարության մնայուն բնագավառում: Այսպիսի խաղաղարար և ստեղծագործ աշխատանքն է Հրանտ Մաթևոսյանի իդեալը ազգային գործչի համար:

Հրանտ Մաթևոսյանի դիտողությունները գրողների մասին միշտ փնտրված ու ամենաընթերցվողներն են: Նրա անդրադարձները հայ գործիչներին խմբագիրների կողմից միշտ առանձին հաճույքով են ընդունվել ու տեղադրվել առաջին էջերում: Սրանք գրականագիտական վերլուծություններ, գրախոսություններ չեն, սրանք բոլորը հոգեբանական վերլուծություններ են, մարդկային զրույցներ: Իսկ վերջին շրջանում նաև հատկապես ընտրված, շեշտադրված, մեթոդիկ և նպատակային կերպով կառուցված օրինակներ՝ ցույց տվող մեծ գրողի մտածողության իրական ուղղվածությունը: